EU4Business

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2022

ՀԱՅԱՍՏԱՆ



WWW.EU4BUSINESS.AM

EU4Business

# ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ
## ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԻՆ

Եվրոպական միության «EU4Business»՝ «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնությունը հովանավորության նախաձեռնություն է և ներառում է Եվրամիության բոլոր գործողությունները, որոնք ուղղված են Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ՓՄՁ-ների աջակցությանը:

## ՊՈՐՏՖԵԼ*

**23**
ծրագիր




ՖՀ
66.57 միլիոն եվրո

ԲԶԾ
35.51 միլիոն եվրո

ԲՆՄ
10.15 միլիոն եվրո

ԵՄ աջակցության ընդհանուր բյուջե
**€112.23**
միլիոն եվրո

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**6,047** ՓՄՁ աջակցություն է ստացել

**24.9%** կանանց ձեռնարկություններ են

**2,055** նոր աշխատատեղեր են ստեղծվել

**+10.1%** աճել է աշխատողների թիվը ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ներում

**+30.5%** աճ է գրանցվել ՓՄՁ-ների շրջանառությունում

**+7.2%** ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ները ներգրավվել են արտահանման մեջ

**+31.63%** արտահանման աճ ԵՄ աջակցությունը ստացած ՓՄՁ-ներում

**€78**
միլիոն եվրո
լրացուցիչ եկամուտ

* ակտիվ ծրագրերի ընդհանուր բյուջեն
** 2021թ. տվյալներ

# Ի՞ՆՉ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ԵՄ-Ը ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՓՄՁ-ՆԵՐԻՆ

### Ֆինանսավորման հասանելիություն (ՖՀ)

- Կոնցեսիոն վարկեր ազգային բանկերի միջոցով
- Միկրոֆինանսավորում տնայնագործ բիզնեսների համար
- Փոքր վարկեր ՓՄՁ-ներին
- Ազգային բանկերի աշխատակիցների վերապատրաստում՝ ուղղված ՓՄՁ-ների սպասարկման բարելավմանը
- Ֆինանսական գրագիտության դասընթաց ՓՄՁ-ների համար

### Բիզնեսի զարգացման ծառայություններ (ԲԶԾ)

- Անմիջական խորհրդատվություն և դասընթացներ ՓՄՁ-ների համար
- Գործարարության աջակցության ազգային կազմակերպությունների (ԳԱԿ) վերապատրաստում և կարողությունների զարգացում
- Բիզնես ինկուբատորների հիմնում՝ ստարտափերի համար
- Փոխադարձ աջակցության և զարգացման բիզնես կլաստերների զարգացում
- Աջակցություն կառավարությանը՝ նոր շուկաների հատկորոշման գործում
- Կարողությունների զարգացում արտահանման աջակցման կազմակերպություններում

### Բիզնեսի համար նպաստավոր միջավայր (ԲՆՄ)

- Կարգավորման շրջանակի բարեփոխման և լավագույն փորձի հանրահռչակում
- Քաղաքականություն մշակողների և կարգավորողների կարողությունների հզորացում
- Հանրային և մասնավոր հատվածների երկխոսության խրախուսում
- Գործարար շրջանակների իրազեկում՝ բարեփոխումների գործընթացների և կանոնների/ընթացակարգերի մասին

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### ՖՀ

- **744** ՓՄՁ ստացել է վարկ
- **69.98%** տրամադրվել է կանանց ՓՄՁ-ներին
- **15.19 միլիոն եվրո** վարկերի ընդհանուր արժեքը
- **20,420 եվրո** միջին վարկը
- **8** գործընկեր ֆինանսական հաստատություն ստացել է աջակցություն

### ԲԶԾ

- **62** գործարարության աջակցության կազմակերպությունների կարողություններ հզորացվել են
- **4,930** խորհրդատվական ծառայություններ են մատուցվել ՓՄՁ-ներին
- դրանցից **16.77%** կանանց ՓՄՁ-ներ էին
- **111** ՓՄՁ մասնակցել է «Բիզնեսը բիզնեսի համար» միջոցառումների

### ԲՆՄ

- **18** օրենք, քաղաքականություն և կանոնակարգ է բարեփոխվել
- **4** հանրային և մասնավոր հատվածների երկխոսության միջոցառումներ են անցկացվել
- **7** կառավարական հաստատությունների կարողությունները հզորացվել են

# ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Թե ինչպես հայկական ծիրանի չիրը գրավեց ՄԹ-ի շուկան

«Լուկաշին» գյուղատնտեսական ասոցիացիայի հիմնադիր Վարդգես Դավթյանն առաջիններից էր, որ սկսեց «Երևանի» տեսակի ծիրանի չրի արտադրությունը և արտահանեց այն Միացյալ Թագավորություն: «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության, Միջազգային առևտրի կենտրոնի կողմից իրականացվող «Պատրաստ առևտրին» ծրագրի շրջանակներում Դավթյանը մասնակցել է մի շարք առևտրային ցուցահանդեսների և ստեղծել է կայք, որն օգնում է կապ հաստատել նոր գործընկերների հետ: 2021թ. արտահանման ծավալներն աճել են 20-30%-ով:

Կարդացե՛ք ավելին:

### Օգնություն Հայաստանի կանանց՝ պայքարելու ՔՈՎԻԴ-19 համավարակի բացասական ազդեցությունների դեմ

Նարինե Մինասյանի՝ «Նարո Դոլլս» կոչվող ընկերությունը թեմատիկ հայկական տիկնիկներ է արտադրում: Նա աջակցություն է ստացել «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնությունից և «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունից՝ գնելու կարի մեքենաներ, ինչպես նաև օգտվել է ուսուցման և գործարար խորհրդատվության մի շարք հնարավորություններից:

Կարդացե՛ք ավելին:

### Խորհրդատվությունից մինչև տրանսպորտային ծառայություններ՝ EU4Business-ի վարկային միջոցներով

Անգամ տասը տարի չպահանջվեց, որ Աշոտ Միրաքյանի «Միրա Տրանս» ընկերությունը մի երիտասարդի հավակնությունից վերածեր բեռնափոխադրումներով զբաղվող կայացած և անթերի հեղինակություն վայելող ընկերության: «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության կողմից ֆինանսավորված մի քանի վարկերից հետո «Միրա Տրանսը», 2 աշխատակցից հասավ 30-ի և ծառայություններ է մատուցում արտահանողներին և ներկրողներին, որոնցից մի քանիսը Երևանում գլխամասային գրասենյակներ ունեցող առաջնակարգ ընկերություններ են:

Կարդացե՛ք ավելին:













### Էկոլոգիապես մաքուրից մինչև «սմարթ» ակնոցներ Հայաստանում համավարակի ազդեցության մեղմմանն ուղղված ֆինանսավորման օգնությամբ

«Թվինզ»-ը փայտից ձեռագործ ակնոցներ արտադրող հայկական ընկերություն է: Այն հիմնադրվել է 2014թ.-ին: Ընկերության վաճառքի ծավալներում անցյալ տարի զգալի անկում արձանագրվեց Քովիդ-19-ի բռնկումից հետո: EU4Business-ի ֆինանսավորմամբ և GIZ-ի կողմից իրականացվող ծրագրի միջոցով «Թվինզ»-ը կարողացավ ոչ միայն կայք ստեղծել և սկսել առցանց վաճառքը, այլ նաև մշակեց ընդլայնված իրականության կամ AR լուծում: Արդյունքում հնարավոր դարձավ ակնոցն առցանց փորձարկել, ինչը բերեց նաև սմարթ ակնոցների՝ լսողական համակարգով վերազինմանը:

Կարդացե՛ք ավելին:

### Հայաստանի Շիրակի մարզում աշխատատեղերի ստեղծում՝ շնորհիվ արհեստի

Մերի Մելիքյանը և Հասմիկ Խաչատրյանը ձեռներեցներ են Գյումրիից՝ Հայաստանի Շիրակի մարզում գտնվող քաղաքից: «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության ներքո «ԵՄ-ն Շիրակի մարզի համար. նոր աշխատատեղեր՝ շնորհիվ բրդի արտադրության» ծրագրի շրջանակում նրանք բիզնես են հիմնել: Երկուսն էլ օգտագործում են Ամասիայի բրդի գործարանի թելերն ու գործվածքները և պատրաստում են սեփական բրենդային ապրանքներ:

Կարդացե՛ք ավելին:

### Հայաստանի Եվրոպական բիզնես ասոցիացիան աշխատում է ՓՄՁ-ների համար ավելի լավ բիզնես միջավայր ստեղծելու ուղղությամբ

2018 թ. ի վեր «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» ծրագրի շրջանակում Եվրոպական բիզնես ասոցիացիան (EBA) նախ ամրապնդել է իր աշխատակազմի ներքին կարողությունները ու արդյունավետ համագործակցություն հաստատել կառավարության հետ: Մասնավոր հատվածի մոտավորապես 800 ներկայացուցիչներ մասնակցել են ԵԲԱ-ի կազմակերպած հանդիպումների ընթացքում տեղ գտած ընդհանուր թվով 34 հանրային-մասնավոր երկխոսությունների: Արդյունքում 13 օրենք և կարգավորում է փոխվել Հայաստանում:

Կարդացե՛ք ավելին:

Մանրամասների համար տե՛ս **WWW.EU4BUSINESS.AM**